

Մարատովկայի միջնակարգ դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Սևանա լիճ» թեմայի ուսուցումը
Հայաստանի աշխարհագրությունը դասին նորագույն
մեթոդների կիրառմամբ

ԱՌԱՐԿԱ՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՄԱՐԻՆԵ ԻԳՆԱՏՅԱՆ

ՄԱՐԶ՝ ԼՈՌԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐԱՏՈՎԿԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑ

ԼՈՌԻ 2022

Բովանդակություն

Ներածություն-----	3
ԳԼՈՒԽ 1. 1. Սևանա լիճ-----	6
1.2 Սևանա լճի էկոլոգիական հիմնախնդիրները-----	8
ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ 2 1.9-րդ դասարանի Հայաստանի աշխարհագրության «Սևանա լիճը» թեմայում նորագույն մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը-----	13
Եզրակացություն -----	19
Գրականության ցանկ -----	20

Ներածություն

Յուրաքանչյուր երեխա մանկուց հետաքրքրությամբ, պատրաստակամ կլանում է իր համար անհայտ, անծանոթ, նոր գիտելիքներն ու հմտությունները: Հաճախ դասերին չի բավականացնում պատկերավորությունը, զգազմունքայնությունը, ինչը կստեղծեր սովորելու ձգտում: Կարևորը դասը պետք է լինի արդյունավետ: Միայն այս դեպքում գիտելիքները կհիշվեն, ամուր հիմք կդառնան հետագա կրթության համար:

Ուսուցման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ներմուծումը ապահովում է տարբեր տեղեկատվական ռեսուրսների օգտագործումը, հարստացնում է ուսուցման բովանդակությունը, դարձնում տրամաբանական և որոնողական բնույթի, ինչպես նաև լուծում է աշակերտների հետաքրքրասիրության ստեղծագործական ընդունակությունների զարգացման, մտավոր գործունեության խթանման ուղիների որոնման խնդիրները:

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Դրա համար անհրաժեշտ է կիրառել տեսադասեր, ցուցադրել սահիկաշար տվյալ նյութի վերաբերյալ, որպեսզի աշակերտին ներգրավենք դասին: Ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով ավելի հետաքրքրություն կառաջացնի աշակերտների մեջ տվյալ նյութը ուսումնասիրելը և սովորելը:

Դպրոցի աշակերտների համար դասը հետաքրքիր դարձնելու համար ավելի լավ է կիրառել ժամանակակից մեթոդներ. ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով: Ըստ ինձ՝ կրթական ոլորտում դասավանդողը պետք է տիրապետի S2S հմտություններին և կարողություններին, դրանք դարձնելով ուսումնական գործունեության բաղկացուցիչ մասը: Ուսումնական գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու համար կարևոր է համարում օգտագործել մեդիա հմտություններ, մեդիա գործիքներ՝ էլեկտրոնային գրատախտակ:

Հայաստանի աշխարհագրության դասընթացը կոչված է լրացնելու հանրակրթական դպրոցի սովորողների հայրենագիտական և հայագիտական գիտելիքները, ճանաչելի դարձնելու սեփական հայրենիքի աշխարհագրական առանձնահատկությունները, զարգացնելու շրջակա միջավայրի և այնտեղ ընթացող բնական ու հասարակական երևույթների բազմաբնույթ կապերը և փոխադրելու և վերլուծելու:

Հայաստանի Հանրապետության բոլոր լճերը քացրահամ են, իսկ ծագմամբ՝ բազմազան: Այստեղ կան տեկտոնահրաբխային, տեկտոնական, հրաբխային, խառնարանային, սառցադաշտային և այլ ծագման լճեր: Խոշոր լճերի շարքին է դասվում Սևանա լիճը: Այն ունի տեկտոնահրաբխային ծագում: Վիթխարի է Սևանա լճի և բնապահպանական և տնտեսական նշանակությունը: Սևանա լճի բնության ու ջրային պաշարների պահպանությունը և խնայողական օգտագործումը համազգային և պետական կարևորագույն խնդիր է:

Սևանի բնապահպանական խնդիրների լուծմանը նպաստելու համար ստեղծվել է «Սևան» ազգային պարկը:

Նպատակը և խնդիրները. Աշխատանքի նպատակն է ներկայացնել հանրակրթական միջնակարգ դպրոցում «Սևանա լիճը» թեմայի ուսումնասիրման մեթոդիկան՝ նոր մոտեցումներով, վարժությունների, առաջադրանքների նոր համակարգով:

Նպատակը առաջադրում է լուծել հետևյալ խնդիրները.

1. Ցույց տալ քարտեզի վրա Սևանա լիճը իր հարակից լեռնաշղթաներով,
2. Հատուկ ուշադրություն դարձնել Սևանը, որպես ազգային պարկ և որպես քացրահամ ջրի հանրապետական նշանակության կարևոր օբեկտ,
3. Ուսումնասիրել հանրակրթության միջնակարգ դպրոցում «Սևանա լիճը» թեմայի ուսումնասիրման հայեցակարգային մոտեցումները,
4. Ուսումնասիրել վերոնշյալ թեմային առնչվող պահանջները, որոնք ներառված են առարկայական չափորոշում, ծրագրում, միջին և ավագ դպրոցի համար նախատեսված դասագրքերում և մեթոդական ձեռնարկներում:

տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի , Վարդենիսի , Գեղամա լեռները:

Սևանա լճի ջրերը Հրազդան գետի միջոցով ոռոգում են Արարատյան դաշտը: Հրազդան գետի վրա կառուցված 6 էլեկտրակայանները ձևավորում են հանրապետության ամենամեծ՝ Սևան – Հրազդան կասկադը :

1974թվականին ստեղծվել է Սևան ազգային պարկը : Ջրի մակարդակը վերականգնելու համար կառուցվել է Արփա-Սևան (48.3 կմ, 1963–81թվականներ), ապա՝ Որոտան -Արփա ջրատարները (21, 6 կմ, 2004թվական): Սևանա լճի մակարդակի փոփոխությունը պայմանավորված է ջրային հաշվեկշռի բաղադրիչների մեծություններով, որն էլ իր հերթին կախված է տարվա հիդրոլոգիական և եղանակակլիմայական պայմաններից, ինչպես նաև Սևանա լճից բաց թողնվող և Արփա-Սևան ջրատարով լիճ մուտք գործող ջրի ծավալներից: Սևանա լճի ջրային հաշվեկշռի մուտքի գլխավոր բաղադրիչը գետերով մուտք գործած ջրի քանակն է (տարեկան 774 մլն. էտր մ), այնուհետև տեղումները լճի մակերևույթի վրա (510 մլն. էտր մ), ապա Արփա-Սևան ջրատարով ջրի ներհոսքը (նախատեսված է տարեկան 250 մլն. էտր մ) և ստորերկրյա ներհոսքը (78 մլն.մ3), իսկ էլքի գլխավոր և ընդհանրապես ջրային հաշվեկշռի ամենամեծ բաղադրիչը գոլորշացումն է (տարեկան մոտ 1մլրդ. էտր/մ): Ելքի հաջորդ բաղադրիչը ջրի բացթողումն է և ապա ստորերկրյա արտահոսքը (տարեկան 13.3 մլն. էտր մ): Սևանա լճից բաց թողնվող և Արփա-Սևան ջրատարով լիճ մուտք գործող ջրի քանակների վերաբերյալ դիտարկումները իրականացվում են համապատասխանաբար Գեղամավան և Օռվինար դիտակետերում, որոնք զինված են գերժամանակակից սարքավորումներով:

Գետային ներհոսքի և մթնոլորտային տեղումների ամենաբարձր արժեքները դիտվում են հիմնականում մայիս ամսին, իսկ գետային հոսքի ամենացածր արժեքները դիտվում են օգոստոսին, իսկ տեղումներինը՝ դեկտեմբեր-հունվարին: Գոլորշացման մեծությունը նույնպես ունի ներտարեկան արտահայտված ընթացք, ամռանը և աշնանը ավելանում է, ձմռանը և գարնանը՝ նվազում:

Խնդիրն այն էր, որ թույլ չտրվեր այդպիսի գոլորշիացում, և լճում կուտակվող ջուրն ի սպասս դրվեր հանրապետության տնտեսական զարգացման շահերի: Խնդրի առաջին մասը լուծվում էր Հրազդան գետով արտահոսքի մեծացման և դրա շնորհիվ լճի մակարդակի իջեցման ու հայելային մակերեսի կրճատման միջոցով: Խնդրի երկրորդ մասը լուծվում էր Հրազդանի վրա

ջրաէլեկտրակայանների և գետից սկիզբ առնող ջրանցքների կառուցման միջոցով:

Ըստ էության, Սևանի համալիր օգտագործման ծրագիրը խոստանում էր ապահովել հանրապետության տնտեսական զարգացման երկու արմատական հարցերի՝ էներգետիկ կայուն բազայի ստեղծման և ոռոգելի հողերի ընդարձակման լուծումը:

Նախատեսվում էր ծրագիրն իրականացնել հնարավոր կարճ ժամանակում՝ 10-13 տարում: Սակայն երկրորդ համաշխարհային պատերազմը խախտեց նախատեսված ժամկետները, և ծրագրի վերջին կառույցի՝ Երևանի ջրէկ-ի շինարարությունն ավարտվեց միայն 1962թ., այսինքն՝ 15 տարի ուշացումով: Այդ ընթացքում տնտեսական իրադրությունը ՀՀ-ում կտրուկ փոխվեց: Կառուցվեցին դեպի Հայաստան եկող բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծեր և գազամուղներ: Արարատյան դաշտում հայտնաբերվեցին ստորերկրյա ջրային պաշարներ, որոնք կարող են օգտագործվել ոռոգման նպատակով: Պարզ դարձավ, որ Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով ծագում են մի շարք բնապահպանական խնդիրներ (ճահճացում. ջրի ախտոտում և այլն), որոնք պահանջում են անհետաձգելի լուծում: Որոշում ընդունվեց փոխել լճի օգտագործման ծրագիրը և այն պահպանել բնականին մոտ վիճակում: Պետք է կրճատվեր Հրազդան գետով ջրի արտահոսքը, դադարեցվեր մակարդակի իջեցումը, իսկ հետագայում բարձրացվեր 5-6 մետրով: Մշակվեցին ու շարունակում են մշակվել ու իրականացվել մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք նպատակ ունեն թույլ չտալ լճի հետագա աղտոտումը, բարելավվել շրջակա միջավայրի որակը: Արդեն իրագործվել է Արփա-Սևան և Որոտան-Արփա ջրատար թունելների կառուցումը, որով լիճը Կետչուտի և Սպանդարյանի ջրամբարներում կուտակված ջրային պաշարներից լրացուցիչ կարող է տարեկան ստանալ 350-400 մլն. մետր խորհանարդ ջուր:

Ներկայումս Սևանա լճի մակարդակը բարձրացել է 3 մետրով և շարունակում է բարձրանալ, իսկ լճի հայելու բացարձակ բարձրությունը անցել է 1900 մետրից:

1.2 ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սևանա լիճը աշխարհի բարձրալեռնային խոշոր քաղցրահամ բնական ջրավազաններից մեկն է: Սևանի ջրային պաշարները նախքան մակարդակի իջեցումը կազմել են 58.8 մլրդ մ խորանարդ, որից օգտագործվել է ջրի ծավալի 44%-ը կամ 26 մլրդ մետր խորանարդ (դրա մոտ 65%-ը օգտագործվել է էներգետիկ, իսկ 36-ը գյուղատնտեսական նպատակներով) մակարդակն իջել է 20 մետրով, լճի հատակից ազատվել է 25000 հա տարածք, որը գյուղատնտեսական տեսակետից համարվում է ոչ լիարժեք հողատարածք, սակայն որպես անտառային տարածք միանգամայն օգտագործելի է: Լճի մակարդակի և ծավալների փոփոխությունները ազդել են նաև ձկան պաշարների վրա: Այսպես 1934-40 թվականներին մինչև լճի մակարդակի իջնելը ձկան որսը կազմել է 10402 ցենտներ, այդ թվում իշխանի որսը 50%, և կողակինը գրեթե 50% իսկ սիգր՝ 0.2%, իսկ 1974 թվականին թեև որսը կազմել է 12444 ցենտներ, սակային իշխանի որսը կազմել է ընդամենը 8%, կողակինը 20%, սիգր գրեթե 70%: ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և ձկնաբուծության ինստիտուտի կողմից վերջին տարիներին իրականացված ձկնային պաշարների հետազոտման արդյունքների հիման վրա բացահայտվել է սիգի տեղախմբի թվաքանակի և կենսազանգվածի կտրուկ անկում: Այսպես վերջին տարիների հաշվարկային ցուցանիշների հիման վրա 3-4անգամ նվազել է միավոր որսամիջոցի որսած ձկան քանակությունը: Զգալիորեն փոխվել են նաև տեղախմբի այնպիսի էկոլոգիական ցուցանիշները, ինչպիսիք են տարիքային և սեռային կառուցվածքը: Մասնագետները գտնում են, որ սիգի տեղախմբի բոլոր այս բացասական փոփոխությունները նրա պաշարների անխնա շահագործման արդյունք են: Սևանա լճի մաքուր լեռնային օդը, հանքային ջրերի աղբյուրները, գեղեցիկ բնությունը և վերջապես Երևանին մոտ լինելը, ժողովրդատնտեսական և գեղագիտական տեսակետից նրան դարձրել են շատ հրապուրիչ: Որքան էլ որ հիմնավոր լինի ժողովրդատնտեսության զարգացման համար Սևանի ջրերի օգտագործման անհրաժեշտությունը, այնուամենայնիվ թույլատրվել է էկոլոգիական մեծ սխալ: Ջրի մակարդակի իջեցումը հանգեցրել է այս յուրահատուկ էկոհամակարգի հազարամյակների ընթացքում ձևավորված բնական կապերի խաղտմանը: Փոխվել է լճի ջերմային և լճաբաշխման ռեժիմը: Ամռանը լիճը արագ տաքանում է և բարձր ջերմաստիճանը նպաստում է ջրիմուռների առագ աճին (լճի ծաղկմանը), որը անցանկալի է, քանի որ ջրիմուռների մեռած մնացորդները սկսում են նեխել, սա էլ իր հերթին բացասաբար է անդրադառնում զազային ռեժիմի վրա: Գազային ռեժիմի

վրա խիստ բացասաբար է ազդում նաև լճի մշտական սառցակալումը սկսած 1971թ-ից: Լճի սառցե զրահը խոչնդոտում է ջրի մեջ օդի թափանցելուն, որը կործանաբար ազդեցություն է թողնում լճի կենդանական ու բուսական աշխարհի վրա: Սևանա լիճ է թափվում 28 գետ, որոնք իրենց հետ լիճ են բերում կենսածին տարրեր, որոնք ամենամեծ քանակներով լիճ են թափվում գարնանային և աշնանային վարարումների շրջանում: Գետերից լիճ են թափվում ազոտի և ֆոսֆորի տարեկան քանակի կեսից ավելին: 1980 թ-ին 1929-թվականի համեմատությամբ լիճ թափվող ազոտի հանքային ձևերի քանակությունը մեծացել է 7 անգամ, Արփա գետի խառնվելուց հետո 90-ական թվականներին 10 անգամ: Ներկայումս տարեկան լիճ է լցվում 1440 տոննա ազոտ, 180 տոննա ֆոսֆոր: Սևանի ավազանի 50 արդյունաբերական կոմունալ-կենցաղային ձեռնարկություններից մեկ օրվա ընթացքում լիճ է թափվում մոտ 40-60000մ խորանարդ կեղտաջուր, որից միայն 10000մ խորանարդն է մաքրվում: Գոմաղբի ձևով լիճ թափվող ազոտի և ֆոսֆորի քանակը 1945-1990 թվականների ընկած ժամանակահատվածում աճել է ազոտինը՝ 1.5 ֆոսֆորինը՝ 1.6 անգամ: Այսպիսով կենսածին տարրերի ներթափանցման գործում առանձին աղբյուրների հարաբերական մեծությունը տոկոսով արտահայտված հետևյալն է

Աղբյուրները	Ազոտ (տոկոս)	Ֆոսֆոր (տոկոս)
բնակ. և արդյունաբ. լիճ մուտք գործած	22	45
անասնապահությունից	30	6
բուսաբուծությունից	48	49

Սևանա լճում տեխնածին ծագում ունեցող թունավոր նյութերի քանակությունների ուսումնասիրությունները ցույց են տվել որ 1971-1990 թվականների ընթացքում Սևանա լճի ջրավազանում օգտագործվել են շուրջ 30 անուն թունաքիմիկատներ, որոնցից տարեկան լիճ են թափվել տարեկան 100 տոննա ծանր մետաղներ, իսկ տեղումների միջոցով 33 տոննա: Հրագրան գետով լճից դուրս է բերվել տարեկան 40-50 տոննա ծանր մետաղ: Լճում մեծ քանակությամբ առկա են երկաթ և ցինկ: Սևանա լճի բնական ռեսուրսների նկատմամբ տարվող սպառողական քաղաքականության հետևանքով լիճը սկսել է ճահճանալ: Եթե նույնիսկ լճի մալարդակը

բարձրանա 6մ և բացառվեն լիճ թափվող տեխնածին և կենսածին թափոնները, միննույն է, վստահ չենք կարող խոսել

Սևանա լճի բնական պաշարների վերականգման և արդյունավետ օգտագործման հեռանկարների մասին, այն պարզ պատճառով որ 1924թ սիգ ձկնատեսակի, իսկ 1982թ արծաթափայլ կարաս և գետի խեցգետին օտար տեսակների ներմուծումը Սևանա լիճ կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ:

Լճի էկոհամակարգի և ջրերի որակի բացասական ներգործություն ունեն լճի ավազանի բնակավայրերի կենցաղային աղբի և թափոնների անկառավարելի արտանետումները: Լճի ավազանում բացակայում են կառավարվող կենտրոնացված աղբավայրերը: Այդ պատճառով ավազանում առաջացել են աղբի կուտակման բազմաթիվ վայրեր և ցրված աղբակույտեր: Բնակչությունը և տնտեսվարողները աղբը թափում են անկազմակերպ, հիմնականում գետերի ու առուների հունների մեջ: Գետերի ջրերի և տեղումներից առաջացող հոսքաջրերի միջոցով աղբի մնացորդները ավամերձ գոտիներից լվացվում են դեպի լիճ և վերջիվերջո հայտնվում են լճի ջրերում: Հաճախակի են նաև աղբի և թափոնների ուղղակի արտանետումները լճի մեջ: Սևանա լճի ջրային էկոհամակարգի վրա որոշակի բացասական ներգործություն ունեն նաև ավազանի գյուղատնտեսությունը և անասնապահությունը, որոնց արտանետումներն ու կեղտաջրերը նույնպես ներհոսում են լիճ:



Համեմատած խորհրդային տարիների հետ ջրովի վարելահողերի մակերեսը, պարարտանյութերի օգտագործումը, անասնապահական խոշոր տնտեսությունների թիվը նվազել են: Այդ պատճառով գյուղատնտեսության և անասնապահության արտանետումների ճնշումը լճի էկոհամակարգի վրա զգալիորեն նվազել է: Այնուամենայնիվ գյուղատնտեսության և անասնապահության արտանետումների ճնշումը լճի էկոհամակարգի վրա, հատկապես ժամանակակից տեխնոլոգոաների բացակայության հետևանքով, դեռևս զգալի է:

Ցավոք ջրածածկվող տարածքները ժամանակին չմաքրվեցին և չնախապատրաստեցին ջրածածկմանը: Այդ պատճառով ջրածածկ են եղել հազարավոր հեկտար ափամերձ անտառներ և թփուտներ: Ներկայումս նշված ջրածածկ անտառները դարձել են Սևանա լճի էկոհամակարգի վրա ազդող բացասակալական գործոն:

Ջրածածկ անտառների կենսազանգվածից (քայքայման, լուծահանման, տարալուծման հետևանքով) լճի ջրեր են լուծահանվում մեծ քանակությամբ կենսածին նյութեր^a օրգանական ածխածին, ազոտ, ֆոսֆոր և այլն, որոնք խթանում են լճի ճահճացման պրոցեսը:



ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1.1 9-րդ դասարանի Հայաստանի աշխարհագրության «Սևանա լիճը» թեմայում նորագույն մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը:

Կրթական.

Սովորողը պետք է՝

- Իմանա ջրագրական գլխավոր օբյեկտները, ջրաբանական առանձնահատկությունները, ջրային ռեսուրսները, լճի ջրային հաշվեկշիռը:
- Կարողանա քարտեզի վրա ցույց տալ գլխավոր լճերը, համացանցի Google Planeta ծրագրով տեսնել Սևանա լճի աշխարհագրական դիրքը, շրջապատող լեռները, թերակղզիները:

Դաստիարակչական.

Սովորողը պետք է գիտակցի՝

- Սևանա լճի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները՝ որպես Կովկասի «մարգարիտ»,
- Լճի բնառեսուրսային, բնապատմական, գեղագիտական արժեքը,
- Լճի դերը որպես Հայաստանի քացրահամ ջրի անփոխարինելի շտեմարան,
- «Սևան» ազգային պարկի նշանակությունը, ջրի անադարտության, կենսաբանական ռեսուրսների պահպանման և ռեկրեացիոն ռեսուրսների կազմակերպման համար:

Մեթոդները՝ «Գաղափարների քարտեզագրում», «Պրիզմա», «Համառոտ դասախոսություն», «Կենսագրական բանաստեղծություն», «Ապագայի անիվ»:

Ուսումնադաստիարակչական միջոցներ և պարագաներ՝ աշխարհի և ՀՀ ֆիզիկական քարտեզ, ՀՀ բուսական և կենդանական աշխարհի քարտեզ, Սևանա լճի գեղանկարներ, համակարգիչ, պրոյեկտոր:

Ներառարկայական և միջառարկայական կապեր՝ «Հայ գրականություն»,


«Կենսաբանություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Հայոց պատմություն», «Կերպարվեստ»

Դասի ընթացքը՝

Հայաստանում ծվարած կապույտ հրաշք, մի տեսիլ, Որ թվում է, թե հանկարծ ցած է ընկել երկնքից:

Խթանման փուլ

Կիրառելով «Մտքերի քարտեզագրում» մեթոդը՝ գրատախտակին գրվում է «Սևանա լիճ» բառը, սովորողները նախորդ տարիներից վերհիշում են լճի մասին իրենց իմացած անվանումները:



Գծապատկերն ուսուցչի կողմից լրացվում է այլ լրացուցիչ տեղեկություններով: Այսպես՝ «Ֆրանսիացի ճանապարհորդ Սեն Մարտենի կարծիքով՝ Լիխնիտես լիճը Պտղոմեոսի քարտեզի վրա հենց Սևանն է»: Կամ՝ հայտնի է հետևյալ ավանդազրույցը. «Վանի հայերը վերաբնակվեցին Սևանա լճի ափին, կարծելով, որ սա էլ այնպիսի լիճ է, ինչպիսին Վանա լիճը: Սակայն դաժան ձմեռը փշրվեց նրանց հուսերը, և նրանք բացականչեցին՝ «Սև Վան եկավ մեր գլխին...»»: «Գեղամա ծով» անվանման մեկնաբանությունը գտնում ենք Մովսես Խորենացու մոտ: Մեկ այլ մեկնաբանությամբ, իբր թե Լենկ Թեմուրը Սևանի վազանը նվաճելուց հետո հարցնում է Մելիք Մանուչարին, թե որքա՞ն է նրա հարստությունը.

-Թող ապրի խանը,- պատասխանում է Մելիքը,- ես այնքան հարուստ եմ,որ քո ողորմածությամբ կարող եմ ձեռով ոռոգել Մազրայի դաշտը:

-Գյոկչա(գեղեցիկ է),- բացականչում է ակնապիշ Լենք Թեմուրը,- չոխ գյոկչա(շատ գեղեցիկ է)այն բոլորը, ինչ տեսնում եմ:- Այդ օրվանից լիճը կոչվեց Գյոկչա:

Սևանա լճի տեղում ցամաք է եղել՝ անտառապատ բլուրներով եւ ծաղկավե տղաշտերով: Գյուղին մոտիկ, բլրի տակ, եղել է մի առատ աղբյուր, որից ջուր վերցնելիս գյուղացիները հանում էին ակունքի ահագին փակիչը: Մի երեկո գյուղի հարսերից մեկը ջրի է գնում աղբյուրը, հանում է փակիչը, կուժը լցնում ու գալիս տուն՝ մոռանալով փակել ակունքը: Ջուրը դուրս է հորդում, ծավալվում չորս կողմ: Երբ այն հասնում է տներին՝ բնակիչները փախչում են, ասելով. «Քար դառնա՝ ով բաց է թողել ակունքը»:

Եվ մոռացկոտ հարսը քար է դառնում, իսկ ջուրն անընդհատ բարձրանալով՝ կազմում է Սևանա լիճը, որի երեսից հազիվ վեր է բարձրանում քարացած հարսի գլուխը:

Վանեցիներով գաղթում և վերաբնակվում են Սևանի ափերին: Տեղի ցուրտ ու դաժան ձմեռը նրանց հիշեցնում է իրենց երկրի մեղմ ու տաք կլիման և դառնորեն կանչում են. « Սև Վան եկավ մեր գլխին, սև Վան»: Այդպես էլ լճի անունը մնում է Սևան:

Իմաստի ընկալման փուլ

Սահիկահանդեսի միջոցով աշակերտները դիտում են Սևանի լճի գեղանկարները(հեղինակներ՝ Գ. Բաշինջաղյան, Փ. Թերլեմեզյան. Ս. Առաքելյան ,Ս. Ռաշմաճյան, Մ. Քամալյան , Մ Աբեղյան, Գ. Շարբաբյան):Այնուհետև դիտարկելով և համեմատելով Սևանա լճի նախկին և ներկայիս վիճակագրական տվյալները՝ համոզվում են, թե ինչ չափերով է էկոհամակարգը ենթարկվել փոփոխության:

Սովորողներին հանձանարարվում է գրել «Կենսագրական բանաստեղծություն»:Ներկայացվում է դրանցից մեկը.

Անունը՝ Փիրուզե հրաշք:

Բնավորությունը՝ Խորհրդավոր, համեստ, ամոթխած:

Ազգականները՝ Վան,Ուրմիա:

Միրում է՝ Շոյել լեռների փեշերն ու հովեկներին:

Ի՞նչ է զգում՝ Ճահճացում»

Ինչի՞ կարիք ունի՝Արփա և Որոտան գետերի օգնության:

Ինչի՞ ց է վախենում է՝ Ծարավից, արևի ջերմությունից:

Տալիս է՝ Ջուր,լույս. ամառը՝ զովություն, ձուկ...

Ուզում է տեսնել՝ Ծովից ծով Հայաստան:

Ազգանունը՝ Գեղարքունյաց:

Աշակերտներից մեկն էլ ներկայացնում է Գ. Էմինի «Յոթ երգ Հայաստանի մասին» գրքից հատված՝ ապահովելով միջառարկայական կապ. «...Սևանը հոգնած մոր պես սմբեց,փոքրացավ ու նիհարեց այնքան,որ երևում են նրա կողերի սպիտակ ոսկորները»:Սևանի ջրերի տակից դուրս ցցված այս սպիտակ կողերը՝ կրաքարի սպիտակ երիզը, կարծես լիճը շրջապատող սգո շրջանակ լինի... Ե՛վ ազնվաջուր լճի իշխանը տագնապած իրեն խփում էր չորացող լճի քարերին և արյունոտում կողերը...»:

Այս փուլում ուսուցիչը սկսում է պատմել Սևանա լճի մասին:Տալիս է աշակերտներին ընդհանուր տեղեկություն, լիճ թափվող գետերի, Սևան-Հրազդան,Որոտան-Արփա-Սևան թունելի, ոռոգչաէներգետիկ համալիրների կառուցման նախագծերի մասին: **Սևանա լիճ**, բարձր լեռնային քաղցրահամ խոշոր լիճ Հայաստանի Գեղարքունիքի մարզում՝ ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Այն երկրագնդի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է Հարավային Ամերիկայի Տիտիկակա լճից հետո: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում լիճն ունեցել է տարբեր անուններ՝ Գեղարքունի,Գեղամա ծով (հին հայկական անվանում), Դարյա-Շիրին,Լակնիտիս Գյոկչայ(թուրքական անվանում):

ՄԵՎԱՆԱ ԼԻՃ

Քաղցրահամ

Սևան ազգային պարկ

Էլեկտրա
Էներգիա

Արարատյան
Դաշտ

Չբուսաշրջի
կուլթյուն

Պահպանվող
տարածք


Բարիքի

Տուրիզմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԱՐ

Կշռադատման փուլ

<<Ապագայի անիվ>> մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռնում, որ աշակերտները կարողանան բացահայտել Սևանա լճի հիմնախնդրի պատճառահետևանքյանին կապերը:



Սովորողներին առաջադրում են Սևանի հիմնախնդրի .լուծման իրենց տարբերակները

- Դադարեցնել լճի դարավոր պաշարների բացթողումը ր լիճը պահել բնականին մոտ
- Կառուցել նոր ջրամբարներ ,ջրանցքներ,Ջրեկ-ներ,ՁԷկ-եր:
Դիմել Որոտան –Արփա-Սևան ջրատարի “օգնությանը”
Լիճը ծաղկում է

Սևանա լճի բաղադրիչների փոփոխությունը ակներևաբար ի ցույց դնելու նպատակով աշակերտներն օգտագործեցին հետաքրքիր խաղ:Թեղերի օգնությամբ առանձին բաղադրիչներ միացվեցին իրար, ապա շատ բաղադրիչներ փոքրացան կամ հանվեցին,և ընդգրկվեցին ներմուծովի այլ բաղադրիչներ:Բաղադրիչների դեղրում/հող,ջուր,բույս,կենդանի, Արեգակ/ հանդես եկան հենց իրենք՝ երեխաները:

Եզրակացություն

1. Կարևոր է ոչ միայն թեմայի տեսական իմացուցությունը, այլև գործնականում կիրառելու կարողությունը:

2. Ուսուցումը պետք է կատարել և՛ ավանդական, և՛ ժամանակակից մեթոդներով:

3. Ուսուցման գործընթացը հետաքրքիր դարձնելու նպատակով առաջարկել եմ խմբային աշխատանք, խաղ-մրցույթներ:

4. Ընտրված մեթոդների գործնականում կիրառումը կօգնի հասկանալ, թե ինչքանով են սովորողները պատրաստ դասին, որքանով են ըկալել թեման և ի վերջո կշռադատման փուլում ընտրված մեթոդները կօգնեն ուսուցչին հասկանալ, թե որքան կոմպոտենտ է նա իր գործում և որքանով է կատարել իր արջև դրված խնդիրները:

5. Այսպիսով կատարված ուսումնասիրություններից հասկացանք, որ Սևանա լիճը վտանգի տակ է և հարակից բնակավայրերի խմելու ջրի միակ աղբյուրը կարող է մի օր սպառվել: Բացի պետության ձեռնարկած միջոցառումներից, որոնք պետք է նպաստեն լճի պահպանությանը և էկոլոգիական հավասարակշռությանը, մեզանից յուրաքանչյուրը ինքը նաև պետք է գիտակցի լճի կարևորությունը և ամեն անգամ լիճ այցելելիս չնպաստի լճի աղտոտմանը, պետք է ձեռնարկվեն միջոցառումներ ապօրինի ձկնորսությունը վերացնելու համար: Օտար ձկնատեսակների ներմուծումը լիճ. այն կարող է հանգեցնել մյուս տեսակների ոչնչացմանը, պետք է խուսափել քիմիարդյունաբերական հիմնարկներ կառուցելուց լճի մոտակայքում կամ գոնե այնպես անել, որ դա չհանգեցնի էկոլոգիական անհավասարակշռությանը, արեստականորեն չբարձրացնել լճի մակարդակը, քանի որ ինչպես վերը նշվեց. դա կհանգեցնի ջրածածկ անտառների առաջացմանը, մի խոսքով Սևանի էկոլոգիական անխափան գոյատևման մասին պետք է մտածի յուրաքանչյուրս, որպեսզի հետևանքներն անդառնալի չլինեն:

Օգտագործված գրականության ցանկ

- 1.Մ. Մանասյան, Ա. Հովսեփյան, // Աշխարհագրություն Հայաստան//, 9-րդ դասարան, //Տիգրան Մեծ// հրատարակչություն, Երևան, 2014թ.:
- 2.Հ. Գաբրիելյան, // Մարգարտյա Սևան//, /Հայաստան// հրատարակչություն, Երևան, 1980թ.:
- 3.Գ. Էմին, //Յոթ երգ Հայաստանի մասին//, /Հայաստան // հրատարակչություն,Երևան, 1970թ.:
- 4.Կ.Վ.Գրիգորյան և ուրիշներ<<Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ>>, Երևան, 2010թ
- 5.Լ.Ս Մելքումյան Մ.Հ Գալստյան Բնապահպանության հիմունքներ